ԳՈՄԵՇԸ

Սարի գլխին մի կտոր սպիտակ սառույց կար, սառույցի վերևը խանձարուրի կապերը լուռ քանդում էր մի փոքրիկ ամպ: Ամպի տակ հրճվում էր արտուտիկը, իսկ ամպի վրայով, նախիրների վրայով, բազեի, սարերի, ուրթերի ու անտառների վրայով ուրիշ աշխարհների մաքուր քամիները հուրհրալով տանում էին մի մեծ արև:

Խոտն այդտեղ չտեսնված համով էր, և հանդապահը հիմա-հիմա պիտի գար գոռար նախրի վրա՝ թե նրանք ինչու են ուտում համեղ խոտը, և նախիրն արածում էր ագահությամբ: Վայ թե վաղուց էին կշտացել, բայց հանդապահը չէր գալիս: Սառույցից մի հատ առու էր սկսվում ու գալիս գնում կովերի միջով: Կովերն ականջի ծայրով լսում էին, որ առուն կա: Խոտ էին ուտում, փորի տակ նրանց կրծերակները վարար-վարար կաթ էին տանում, և նրանք իրենց անընդհատ ասում էին՝ թե առուն կա:

Տաք բուրմունքի մեջ ընկղմված գոմեշն արածում էր մի ձորակում: Հովերն այդ ձորակից ոչ մի բուրում չէին տարել, որովհետև չէին մտել ձորակ: Նախիրը հիմա կարող էր գալ, տրորել ու կեղտոտել այդ ձորակը, դրա համար էլ գոմեշն արածում էր պոզահարելով ու սպառնալով: Մեկ էլ՝ խոտն անհամացավ, դարձավ ուղղակի չոր ծղոտ: Առվակը մոտիկ էր: Բայց մեջքն սկսեց պաղել: Ուրեմն ամպը բռնել էր արևի դեմը: Գոմեշն ուզեց ստվերը մեջքից թոթափել սարսռոցով, բայց կաշին կարծրանում էր նրա վրա: Գլուխը բարձր՝ գոմեշն սպասեց թե ինչ է լինելու հետո, և արյունը նրա երակներում դանդաղում ու ցամաքում էր, ապա դարձավ կպչուն, խցվեց ու կանգ առավ, իսկ աշխարհը խլանում ու հանգչում էր նրա ականջներում: Աշխարհը մեռել ու մթնել էր, հիմա ամպը պայթելու էր, պահ էին մտել հովը, արտույտը, առուն... մեկ էլ երակները լայնացան և արյունը վազեց վարար, հեշտ, քչքչոցով:

Գոմեշը ելավ ձորակից, և մշուշի մեջ գեղեցիկ էին կովերը, հեռաստանները, լուռ ամպը, բայց նախրի մեջ չկար մի ուրիշ գոմեշ: Արյունը տաքանում էր նրա մեջ, մանրիկ ցավով ու ջերմությամբ արթնացան սրունքները, իսկ ողնաշարն արդեն դուրեկան ցոլքերով ծակծկվում էր վզից մինչև պոչը: Նա ոտ փոխեց՝ որ գնա, կռվի կովերի ցուլի հետ, բայց տեսավ, որ չի ուզում գնալ, չարությունը հալվում ու դուրս է սահում իրենից:

Խոր լռության մեջ խոտերը թելը-թելին շղարշե բուրմունք էին

հյուսում այդ կանաչ աշխարհի երեսով մեկ և բուրմունքի հետ հյուսվում էր մի քաղցր թախիծ:

Գոմեշը մռլնգաց:

Կովերը նայեցին՝ հանդապահը չէր, գոմեշն էր, մռլնգում էր: Կովերը շարունակեցին արածել անտեր փափուկ խոտի առատության մեջ, լավ ջրի մոտիկության, իրենց մետաքսե ցուլի ներկայության, կաթի վարար վազքի ու գոլ արևից իրենց պարարտ գոհության մեջ:

Գոմեշը ճանապարհվեց ուրթ: Կուրծը փաղաքշանքով հունցվում էր զույգ ոտի արանքում և գոմեշը գնում էր կթվելու նանին: Սարահար-թի ուրթը ճոճվեց նրա հայացքի մեջ ու կորավ, ձորակում գոմեշը մի երկու բերան խոտ պոկեց ու մոլորվեց: Հա, գնում էր ուրթ: Իսկ ինչու է նախիրը դեռ արածում: Նախիրը կովեր են, ինքը մեկ հատիկ գոմեշ է – ա՛յսպե՞ս:

Նա կանգնեց վրանի դռանը, կանչեց ու սպասեց նանի դուրս գալուն:

– Եկել ե՞ս,– ասաց նանը:

– Էս օրը ճաշին էս ինչո՞ւ ես եկել,– ասաց նանը:

– Նախիրը հանդում՝ դու վեր ես կացել եկել:

– Դե լավ, որ եկել ես՝ արի կթեմ:

– Կուրծդ կիսատ՝ էս ո՞ւր ես եկել:

Կթվորը լավ չէր կթում, կուրծը ցավեցնում էր: Գոմեշը ծռեց պարանոցը, հոտ քաշեց՝ նանի հոտն էր, նանի ձայնն էր, բայց այս անգամ իսկի լավ չէր կթում: Գոմեշը տեսավ որ չի ուզում կթվել: Հեռու հեռաստաններից դենը, տաք մշուշների մեջ գոմեշների խմբեր են կանգնած և նրանցից մեկը անտառների ու ճանապարհների գլխով հղում է իր թախիծը սրան:

– Հը՞, Սաթիկ... նանիդ տրորում ես, էլ քեզ ո՞վ կկթի:

– Չէ, կաթ չես բերել, եղածն էլ չտվեցիր:

– Վույ, վույ, վույ, վույ, նանիդ տրորեցիր:

– Մինա՞ս... գոմեշն աչքիս մի տեսակ է երևում:

– Հա՞... գոմեշս ցուլ է ուզում:

– Գոմեշս ցուլ է ուզում: Հուլիս, օգոստոս, սեպտեմբեր... մարտ... մարտ, մայիս... լավ ժամանակ ես ծնելու: Ձագիդ բոխու տերև կտամ... կանաչ արև կլինի, մայիս կլինի...

Գոմեշը բլրի գլխին կանգ առավ ու աստծու կանաչ աշխարհի վրայով նայեց հեռվի շեկ հովիտներին:

Աղվեսը մեռել էր ծերպերի մեջ լերկ մի տեղ՝ որպեսզի խոտերը

չխանգարեն և երկնքի բազեն անպայման տեսնի նրա դին: Եվ այնքան ճիշտ էր մեռել աղվեսը, որ հովը քշում տանում էր նրա ագին:

Հեռուների շեկ հովիտներում մշուշների տակ գոմեշների շոգած խմբեր էին օրորվում և նրանց մեջ տաք ու զորեղ մեկը, գլուխը բարձր բռնած, իր կանչը հղում էր սրան: Գոմեշը մռլնգաց ու պոկվեց բլրի գլխից դեպի ձորը...

Էն ի՞նչ է անում, էն ի՞նչ է անում, էն ի՞նչ է անում էն անասունը,– վրա վազեց աղվեսը: Հազար ասի էդ անիծված տունն էդ փափուկ հողում չփորենք... Թո՛ւհ...– Աղվեսը թռավ գոմեշի դնչի տակով, ինքը հազիվ չտրորվեց և կարողացավ մի քիչ վախեցնել, մի քիչ թեքել նրա ուղին: Հետո պպզեց ու նայեց նրա հեռացող գավակին:

Անտառեզրի եղինջուտ մոշուտը ճղեց անցավ, մտավ խաղաղ լույսով լուսավորված անտառ, ուր ծառերը բարձր էին, նրանց բները՝ ողորկ, և գետինն այդտեղ հյուսված էր ջղուտ արմատներից: Գոմեշը լսում էր անտառի խաղաղ շնչառությունը: Հետո հողը փափկեց, դարձավ փտած խաշամ, արջախոտը շատացավ, ապա կայծկըլտաց ու միագույն սպիտակեց մոռուտ բացատը: Բզզոցը կանգնած էր ծառերի բարձրությանը հավասար, մոռենիները ծածկում էին գոմեշին, մոռի բուրմունքը կանգնած էր ծառերի կես բարձրությամբ, իրար հյուսված թփերը բռնում էին գոմեշի եղջյուրից, խշշոցը լցվեց նրա ականջները: Բացատը վերջացավ, և անտառում լռությունն այնպես էր դարանել, կարծես գոմեշը խուլ էր:

Հողից սնկահոտ էր գալիս, իսկ գետինը խաշամի տակ փտած դուրս եկավ, անաղմուկ սահեց հողի ու գոմեշի հետ ձորը: Ձորը կավե պինդ ցեխ էր, գոմեշի ոտքերը հատ առ հատ բռնեց և քաշքշեց ջլերի ու հոդերի կապերը: Գոմեշը ելավ ձորից, կանգնեց անտառի եզրին:

Քսանհինգ օր հետո փչան որսորդ Ադամ քեռին տեսավ տրորված ցեխը, նկատեց, որ կոճղը վերջերս է ձորն ընկել, կանգնեց մոռուտի բերանին և չմտավ մոռուտ մոռ ուտելու, այլ թութուն տրորելով պարծեցավ գյուղամիջում.

– Արջի վրա ընկա՜... Իմ ձեն-ձունի վրա իրեն խփել էր ձո՜րը... ծառեր էր շուռ տվե՜լ... Մոռուտը քանդուքարափ էր արե՜լ... Ասի գնա՜մ, ասի որսն արգելված է:

Գոմեշը կանգնել էր անտառի եզրին սպիտակ լույսի դեմ, գարու արտի մոտ: Արտը լուռ սպասում էր արևի տակ: Հասկերը կեցած էին ուղիղ-ուղիղ. ոչ մեկը ոչ մեկի արևը չէր խլում: Արևը մեծ էր այդ

արտի գլխին, լույսը շատ էր, յուրաքանչյուր գարեհասկ ըմպում էր իր բաժին արևն ու գնդում իր հատիկներն իր ներսում, և դրանից արտը ծայրեծայր շրշում էր ջերմ լույսի մեջ:

Արտի մասրաթուփը, որ մեկ հատ սպիտակ ծաղիկ ուներ և մի կենտ հատիկ էլ կոկոն և տասը հատ կանաչ մասուր, իր տաք բուրմունքով փաթաթված հանգիստ սպասում էր: Վայրի բրդոտ մեղուների փոքր ընտանիքը թանձր բզզում էր մասրենու տակ:

Արտեզրի մեղրատանձին հալիլում էր թպրտացող լույսի մեջ. տերևները քիչ էին, տանձին ոտից գլուխ տաքացել էր մեղրի պես. նա մի յոթանասուն տարի խուլ տնքոցով չարչարվում էր կայծակի խանձած դժար վերքը ծածկելու, ջահելությունը հատավ դրա վրա, և դեռ այնպես էլ մի կարգին չէր ներքաշել վերքը՝ Քառանց խև Մացակը եկավ, կացնով խփեց ու, բերանը բաց, փսսան քթով վերև նայեց. և, կարծես անկենդան փայտ էր կտրտում, ծառի բնից գլուխը կախ պոկեց երեսուն գդալացու, երեք շերեփացու: Էլ ուժ չկար, տանձենին խաղաղ ապրել սկսեց իր երկար մահը արտի եզրին, արևի տակ:

Գարնան ճահիճը հիմա չորությունից ճաքեր էր տվել, բայց գոմեշի տակ օրորվեց, խոտի մի փոքրիկ կույտ չոր խնձորածաղկի բուրմունքը կլոր փռել էր շուրջը և թխանում էր բուրմունքի ու արևի մեջ: Ջահել ընկուզենուն մի լավ ծեծել էին ու տարել նրա կանաչ պտուղը մուրաբայի համար: Ընկուզենու տակ արևկող էր արել, մարմրում ու իր մի պուտ թույնը եռացնում էր որձաքարին, կարճ օձը:

Ապա ցամաքեց, խանձվեց ու տապի մեջ շիկացավ Քառանց չոր բլուրը, օդն ալիք առ ալիք խփվեց գոմեշի գլխին, չորացրեց նրա քթերն ու աչքերը: Ջառիվարելուց առաջ գոմեշը փնչոցով կանգ առավ, նայեց:

Բլրի տակ գյուղը հանգել էր. այգիները լուռ էին, ճանապարհները շեկ էին, տների տանիքները կարմրում ու սևանում էին խիտ լույսի մեջ:

Բարակ առուն ցանկապատի տակով մտնում էր Քառանց կաղամբուտ: Արևածաղիկները լայն երեսները դարձրել էին դեպի ճանապարհի գոմեշը: Ադամի բարդին տերևները շուռ էր տվել ու սպիտակել. նա երկու տարեկան խնձորենու, կարտոլի, ծաղկած վարունգի ու տաք-դեղի տակերով կաղամբի ջրից մի քիչ ջուր էր գողանում, բայց ցույց էր տալիս, թե շատ է ծարավ, անձրև է ուզում,

հիմա անձրև է գալու: Կարմիր գամփռը հևում էր խնձորենու տակ: Փայլփլուն ճաղատ, սպիտակ բեղ-մորուքով Սարգիս պապը մեղվանոցում շրջմրջում էր մեղրահացերը. նա խուլ ոտնաձայներ լսեց և թանձր գվվոցի միջից արևածաղիկների մոտ տեսավ իր հին բաճկոնով ու գլխարկը թեք դրած խրտվիլակը, որ նայում էր հարևան այգու կեռասենուն:

Ճանապարհի տակ տունն էր, տան ու գոմի արանքում՝ մեծ բակը: Բակում կարպետներին հատիկ էր փռված և լույս էր արձակում, գլուխը թաթերին՝ հատիկի մոտ նիրհում էր առյուծաձև գամփռը: Գամփռն իրեն ասում էր. ես Բասարն եմ, ես ցորենը պահում եմ. ծտերը քնած են: Նա իրեն ասաց. ձիավոր է գալիս, տեսնես ով է: Հետո Բասարն իրեն ասաց. ձիավոր չի, եզ է գալիս, տեսնես ուր է գնում էս շոգին: Գետնի թույլ ցնցումները շան թաթերի տակ խաղաղվեցին, նիրհի մեջ շունն զգաց հուժկու մեկի ծանր հայացքը: Շունը կոպերը բարձրացրեց՝ վա՛յ, գոմեշը: Շունը մոտ վազեց ու, դունչ-դնչի, մի թեթև ողջագուրվեց նրա հետ և ապա դուրս նետվեց փողոց՝ նանին դիմավորելու: Բայց լուռ ճանապարհն արևի տակ դատարկ էր: Նա մտածեց ու գնաց մինչև ցանկապատի շրջադարձը՝ ցանկապատների երկայնքով մինչև Քառանց չոր բլուր ճանապարհն ամայի էր: Շունը չհասկացավ, տխրեց, ետ եկավ ու պառկեց հատիկի և գոմեշի արանքում:

Հայացքը նրան՝ գոմեշը խուլ մռլնգում էր և չէր ասում թե ինչ է ուզում ինքը, հետո մտավ գոմի սրահ, սպասեց, ապա եղջյուրներով հրեց դուռը, մտավ գոմ: Եվ կանգնեց: Մութ գոմը սառն աչքերով կայծկլտում էր: Գոմում ինչ-որ տնքոց կար, մեկն այդտեղ դարանել էր: Գուցե ոստայնի մեջ սպասող սարդն էր, գուցե տնքում էին հենասյուները: Գոմեշը մտավ իր տեղը և սպասեց: Մսուրքում քարաղը քրտնել էր ու դանդաղ մաշվում էր, մսուրքի տախտակները պառավում էին մթի մեջ, կաղնե սյուները խաղաղ ուժասպառ էին լինում ծանրության տակ, և դանդաղ շաղախվում էր մահը: Գոմեշն իր տեղից ետ-ետ արեց՝ կապը նրան չէր խանգարում. հա՛, ինքն էր մտել այդտեղ, հա՛, ամառ է:

Գոմեշը ելավ գոմից, կանգնեց բակում, մռլնգաց: Դրանք կաղամբի մարգեր էին, դա ցանկապատ էր, դա իրենց շունն էր, դա հատիկ էր,– բայց ինչ էր ուզում ինքը: Հեռուների շեկ դաշտերում դեպի տաք լճակներն են օրորվում գոմեշների խմբեր և դրանց մեջ մեկը տաք է, հզոր է, գեղեցիկ է: Գոմեշը թափով ելավ բակից՝ շունը հետևեց

նրան: Շունը իրեն ասաց. էս գոմեշն էս ո՞ւր է գնում: Գոմեշը շարժվեց ցանկապատի երկայնքով:

Ցանկապատի վերջում մի ուրիշ տուն է, տան դռանը՝ ծաղիկը կար-միր լոբուտ, լոբուտում՝ երկարուկ մի քաղ, որ եթե անցնողին չկծի, ծեծ չուտի կամ գոնե մի քիչ չհաչի՝ չարությունից լաց կլինի: Դրա համար էլ Բասարն անցավ գոմեշից, գնաց կանգնեց լոբուտի մոտ և, պոչն ու գլուխը բարձր, ղռմռաց: Ես էստեղ եմ: Քաղը դուրս չեկավ լոբուտից, և Բասարը, պոչն ու գլուխը բարձր բռնած, ճանա-պարհեց գոմեշին ցանկապատի տակով, աղբյուրի մոտով, լքված այգու միջով, խաչքարերի մոտով, մատուռի տակով գյուղից դուրս: Երեխաները լողանում էին գետակում: Նունիկն ու Գայանեն աղջիկ էին, դրա համար էլ իրենց տրուսիկները չէին հանում, իսկ Հովիկը, Տիգրանը, Մանուկը տղաներ էին, դրա համար էլ լողանում էին մերկ: Գետակը պարզ էր, կանչերը պարզ էին, միակ անգամ աշխարհը ջեր-մացնում էր մանկական մի մեծ արև: Շեկ ճանապարհին մի գոմեշ էր օրորվում, նրա ետևից գնում էր մի կարմիր գամփռ, և նրանք այդ-պես գնալու էին քաղաքների, ձախորդ կյանքի ու ծերության միջով մինչև այդ տղաների օրերի վերջը: Գոմեշը հոտ քաշեց ավազի կույ-տից, շունն էլ հոտ քաշեց: Գոմեշն անցավ գետակը, շունը փնտրեց մի ցատկի հավասար նեղուց: Գոմեշը զառիվերի գլուխ ելավ ոլորա-նով, շունը գտավ նեղուցը, ցատկեց, կարճառաջ վազեց զառիվերի գլուխ՝ գոմեշն արդեն ձորում էր:

Գոմեշն ու շունը ելան Հոնուտի բլուր՝ դեմի շեկ հարթավայրից ալիք առ ալիք խփում էր խարկված ծաղիկների չոր փոշին: Գոմեշը ետ նայեց. շունը պպզել էր բլրի գլխին և ուզում էր լավ մտապահել այդ տեղը, որպեսզի երբ հարցնեն «Բասար, գոմեշն ո՞ւր գնաց», նրանց բերի մինչև այստեղ. «մինչև էստեղ՝ տեսել եմ, սրանից հետո՝ չեմ տեսել»: Շունը հայացքով նրան ուղեկցեց մինչև արահետի ոլո-րան, մի քիչ տխրեց նրա հեռանալու համար, մի քիչ էլ՝ որ նանն իրեն այս էլ երեք ամառ սար չէր տանում, ապա վեր ցատկեց ու ետ վազեց. ծտերը հիմա ուշքի կգան ու հատիկը կուտեն, հատիկը կուտեն, հատիկը կուտեն, բա՜ն չի մնա:

Գոմեշն արահետի հետ թեքվեց, հարվելով մտավ ձորակ: Այդտեղ աղբյուր պիտի լիներ, գոմեշն ուզեց ջուր փնտրել և այդ պահին նրա քթերը մտավ հերկվող սևահողերի թթու հոտը: Խանձված անծայրու-թյունների մեջ մոտիկ մի տեղ վարած սևահող պիտի լիներ, տանձի մի ծառ, ծառի տակ՝ նստած եզներ, եզների մեջ՝ երկու գոմեշ: Գոմեշ-

ներից մեկը հիմա բարձրացրել էր գլուխը, ողնաշարով զգում էր էգի ներկայությունն այս նույն հողի վրա, պորտով որսում էր նրա մոտեցող ոտնափոխը:

Բույրը քթերի մեջ բռնած գոմեշը ելավ ձորակից՝ բոլոր կողմերի վրա միայն շեկ դաշտն էր: Ծղրիդի ճռռոցով մի ալիք տոթ խփվեց ու գոմեշի քթերի մեջ չորացրեց ցելերի թթվաշ զովությունը: Եվ խանձված դաշտն ամայացավ: Նա խուլ մռլնգաց ու սպասեց. ամայության մեջ իր կանչը դանդաղ ցամաքում էր: Չորս հատ ոտքը գետնին պինդ դրած նա կորզեց երկրից դժվար հերկի դռռոցը. արմատները կտրտվում էին, ակոսը ծալվում էր, լծկանն օրորվում էր, գոմեշները ծնկել էին ու գութանը տանում էին ծնկած:

Գոմեշը գետնից փնչոցով հոտ պոկեց ու մղվեց՝ տրորելով խանձված բույրերը, կանչերը, ծղրիդներին:

Գոմեշը սխալվել էր. վարելահողերը վերջացան, սկսվեց քարքարուտների աշխարհը, որ առանց սարսուռի էր վերցնում նրա ընթացքն իր վրայով: Գոմեշը կանգ առավ՝ քարքարուտը մնաց նրա ծանրությանն անհաղորդ: Գոմեշը ետ դարձավ. քարքարուտը նրա հետ մի քիչ ետ եկավ, ապա թեք գահավիժեց ու գնաց հողի տակերով: Այս դաշտերի մեջ մի տեղ դանդաղ ծրում էր հերկման դողը, այս դաշտերի եզրերում մի տեղ կանգնել էր մի գոմեշ, իր ծանր հայացքը դրել սրա կռնակին: Գոմեշը ձայն լսեց: Գոմեշն սպասեց՝ լռություն էր: Գոմեշը քայլեց: Հողը սրսփում էր ու մանրիկ ալիքներով տանում սաթե կճղակների հոսանքները մինչև մի ուրիշ գոմեշ, մարում նրա ծանրության տակ և բերում էր նրա առնական գոյության լուրը:

Գոմեշը դարձյալ սխալվել էր. վարելահողը վերջացավ զառիվերի տակ, վերելքը ծանրացավ, հողը բարակեց ու պոկվեց որձաքարե սալից, ապա դեմը կանգնեց ժայռը: Նրա մութ խորշից անթարթ նայում էր կույր ամայությունը: Գոմեշը մռլնգաց՝ ամայի լռությունն սպասեց մի պահ, օրորվեց ու դարձավ արձագանք. այրից դուրս ցատկեց աղվեսի ու թռչունի խիտ գարշահոտը: Գոմեշը փնչոցով ետ վանեց աղվեսահոտը, շուռ եկավ ու նայեց մշուշոտ հեռուներին, ուր ով գիտե, աստված դրե՞լ էր մի գոմշացուլ, թե չէր դրել: Բարակ հողաշերտը պոկվեց ոտքի տակ, գոմեշը սայթաքեց ու խելագարվեց. գոմեշը գնաց հարվելով, քանդելով, ցատկելով. ամբողջ արյունը խցվեց իր գլխում, իր աղմուկը լցվեց ականջները. վարելահողերը վերջացան, ձորում շունչը պահած դարանեց անդունդը: Գոմեշը դարձյալ սխալվել էր: Աչքը կապույտ աստծուն՝ այդ

ժամանակ գոմեշը մռլնգաց թոքերի ամբողջ ուժով և դարձյալ մռլնգաց: Նրա խոնավ կանչը գլորվեց դաշտերի վրայով, ցամաքեց արևի տակ, խառնվեց հին շշուկների ու կարոտների, դարձավ լռություն: Մանուշակները դեռ գարնանն էին բեղմնավորվել մի պուտ տամկությամբ ու բզեզի թևով, հիրիկները վաղուց էին պահ տվել իրենց կարծր սերը հողին, նեկտարածաղիկը հասցրեց ըմպել իր բաժին ցողն ու ջերմության իր մասը և փակել պինդ բոժոժի մեջ իր սերունդն ու հանգիստ մեռնել, ծղրիդներն իրենց տներում ծղրիդիկներ էին ծնել ու չոր ցողունների մեջ սպասում էին երեկոյին՝ որ երգեն,– արևի տակ լուռ քշվում էր մի խատուտիկ ու մի գոմեշ էր կանգնած վարելահողերի եզրին:

Ալիքավոր երկրի հետ գոմեշը գնաց դանդաղ, ձորակների հետ իջնելով, բլուրների հետ բարձրանալով:

Տանձենու տակ գլխարկն աչքերին ննջող մաճկալն ականջի ծայրով լսում էր, որ հիմա լծկանը տանում են ջրելու, որ լծկանը հիմա գլուխը կտրեց առվից, որ հիմա լծկանը շորորալով գալիս է լծվելու. մաճկալը տեսնում էր էսպես պինդ կրծերով ու հուժկու պորտով մերկ մի կին, լսում էր նրա տաք քռքռոցը և ժպտալով ասում էր իրեն. «Չէ-չէ՜ մի»: Հիմա հոտաղը կռացավ հողակոշտ առնելու, և տաք ցեխաջրում գլուխը թափահարեց մի աչքը փչացած գոմեշը: Մաճկալն զգում էր արևի զովանալը, և օդում թևերը շտկում էր մի բան՝ որ դառնա հով: Մոտիկ մի տեղ մեկը դարանեց: Մաճկալն զգում էր հայացքի հպումն ականջատակին և՝ որ ուսը ընդարմանում էր: Չէ-չէ՜ մի, ասում էր մաճկալը, ապա վրա նստեց ու նայեց պղտոր աչքերով. հին հերկն էր, արևը, եզների մոտեցող ոտնափոխը: Մաճկալը հագավ սապոգները, ծալմլվելով վեր կացավ, մեջքը ջարդեց և, հորանջից հետո, բացեց բերանը, որ մերկ կնոջ չգոյության համար հայհոյի եզնարածին թե նա ինչու է դանդաղում՝ գոմեշը կանգնել էր ցելերի մեջ ու հանգիստ շնչում էր:

– Քեզ մսամթերման էինք տվել, դու էդ որտեղի՞ց եկար:

Գոմեշը մռլնգաց, պոկվեց ու գնաց ցելերով:

– Չէ՜,– ասաց մաճկալը,– Մանիշակ նանի գոմեշն ես, եկել ես ցուլի:

– Խե՜ղճ գոմեշ,– ժպտալով ասաց մաճկալը,– գոմշացուլդ քշել ենք մսամթերման:

Երբ կռտածը ելել էր ցեխաջրից՝ առավ իր ցեղի հոտը և նույն պահին էլ լսեց իր ցեղի տխուր կանչը: Նրա ընկերոջը քշել էին

սպանդանոց, նրան լծում էին եզներից ամենախելագարի հետ, շղթան հագցնում էին լծի կենտրոնից երկու քիլ դեպի գոմեշը՝ որ-պեսզի նա ջարդուխուրդ չաներ այդ անտանելի եզանը, այլ եզը նեղեր այդ ալարկոտ, ուժեղ ու խնամասեր արարածին: Պարանոցը շատ ծռելով՝ փչացած աչքի կողմը նա հիմա տեսավ իր ցեղը և նրա մեջ խաղաց իր ցեղի կարոտը. նա մռլնգաց և ընդառաջ գնաց նրան: Նրանք մոտեցան, հպվեցին միմյանց, և նա հասկացավ, որ դա լուծընկեր չէ: Գլուխը նրա մեջքին՝ նա ուզեց աստծուց աղերսել իր լուծընկերոջը, բայց կանչը կիսատ մնաց, որովհետև նրա մեջ այդ պահին վառվեց ու մոխրացավ իր արվության կարծես ծանոթ, կարծես անծանոթ թրթիռը: Բայց դա արվություն չէր, դա մի պուտ ջղայնություն էր լծկանի, նրա զանգվածի մեջ: Գլուխը նրա մեջքին, նա մռլնգաց դեպի հեռաստաններն ու աստվածը՝ կույր աչքի կողմը մութ էր, մյուս աչքի կողմը եզները գնում էին լծվելու:

Նրա գլուխն իր մեջքին՝ գոմեշն սպասեց: Բայց նա միայն մռլնգում էր: Գոմեշն իր տաք կողերով նրան շոյեց, իր վիզը, իր կողերը, իր ջերմությունը հպեց նրան, պտտվեց նրա շուրջը, նրա հուժկու մարմինը, նրա ռունգները, նրա պորտը, նրա գլուխը, ամ-բողջ նրան պարուրեց իր իգությամբ ու կանչեց դեպի թաքստոցներ, բայց նա ցելերի մեջ կեցած էր լծկան ու հանդարտ:

Գոմեշն այդ հերկվորներից մի գիշերով ու մի ցերեկով խնդրեց նրանց արվին՝ որ հետո նրանց մի մեծագլուխ գոմշուկ տա, բայց նրանք բռնել էին նրա ականջից և քաշում էին լծի տակ, և նա իր անարու վիզը հանգիստ դնում էր լծի տակ:

Գոմեշը գութանի հետ գնաց մինչև ցելերի ծայրը, պտույտ տվեց ու օրորվելով գնաց դարձյալ մինչև ցելերի վերջը, մոտեցավ, հպվեց ու լծի տակից դուրս կանչեց նրան, բայց շողիքն օրորելով նա հան-գիստ տանում էր գութանը: Այդ ժամանակ գոմեշը նրան մի թեթև պո-զահարեց, և նա լծի տակից նայեց խեղճ-խեղճ, մի աչքը կույր, վիզը կոշտ: Գոմեշը մի պտույտ էլ գնաց գութանի հետ՝ նա եզ էր, եզների հետ հանգիստ հերկում էր իր հերկը: Գոմեշը կանգ առավ, սպասեց՝ գութանը հեռանում էր:

Գոմեշն արահետով գնաց, հասավ թփուտներին, կանգ առավ ու ետ նայեց. հանդարտ եզները խաղաղ ուժով շուռ էին տալիս փուխր ակոսը փուխր ակոսին, շողիքները ճոճելով ակոսներ էին անում, և այդ ամբողջը մի տեսակ մեռած ու թաղած չէր: Թփուտները ջար-դելով գոմեշը գնաց, մտավ քարքարուտ: Մի րոպե կորցրեց

աղբյուրի արահետը քարքարուտի մեջ, դարձյալ գտավ, բայց արահետը հին էր, արդենարդեն կորչում էր: Քարքարուտը դարձավ ժայռ, արահետն անցավ ժայռի ճեղքով, սահեց ձորը, դեպի ակունք: Միանգամից մի գետակ է սկսվում: Գետակում լռիկ ապրում է կարմրախայտների քրիստոնյա համայնքը: Մեկ հատիկ բեկված եղեգ է, երկու թուփ դաղձ, զմրուխտե ավազ ջրի տակ, երկու ճառագայթ արև, չորս հատ մժղուկ ջրի վրա և մայր-ձուկը, հայր-ձուկը, աղջնակ-տղեկ տասը զավակները: Բայց... բայց...

Գոմեշն աղբյուրը չգտավ: Աղբյուրը չկար: Թաքուն մի տեղ հյուսվում էին նրա բույրերն ու քչփչոցը, բայց ինքը չկար: Գոմեշը ետուառաջ պտտվեց աղբյուրի բույրերի մեջ, կարծես թե գտավ, նորեն կորցրեց, ոչ, աղբյուրը չքվում էր նրա ռունգների տակից: Գետինը փուչ էր, հետո կարծրացավ, ապա նրա ոտքի տակ չխկաց թուջը: Աղբյուրը շրշում էր թուջի տակ: Գոմեշը ծնկեց ջուր խմելու՝ թուջը ետ հրեց նրա մռութը: Գոմեշը ելավ, պտտվեց, նորեն ծնկեց՝ թուջը ետ տվեց նրա մռութը: Գոմեշը ծնկասող պտտվեց բույրերի մեջ՝ թուջը նստել էր ծանր ու անկենդան: Գոմեշը ճակատը դեմ տվեց թուջին՝ եղջյուրները խուլ թխկացին ու լռվեցին: Գոմեշն այդպես սպասեց՝ թուջը ոչ ընկրկում էր, ոչ էլ ետ հրում: Թուջն այդպես կարող էր մնալ հազար տարի, իսկ գոմեշը թուջի եզրերից լիզեց ջրի բույրերը: Գոմեշը խելագարվեց, իսկ բույրը միայն բույր էր, և թուջը խանգարում էր, որ բույրը դառնա ջուր: Գոմեշը ճակատ տվեց նրան ու պտտեց գլուխը՝ որ եղջյուրները հագցնի նրան ու ոլորի, սակայն նա հարթ էր, պինդ էր, բռնելու տեղ չուներ: Գոմեշը եղջյուրները խփեց նրան, ծնկեց ու պտտվել սկսեց ինքն իր գլխի շուրջը. ջուրը փախչում էր նրա դնչի տակից, ջուրը կար ու չկար: Գոմեշը պտտվեց, պտտվեց, պտտվեց այդ ցեմենտի ու թուջի վրա, մեկ էլ եղջյուրները դուրս պրծան նրա տակից և նա չռվեց ու ճապաղվեց ցեմենտին:

Հետո, արևի տակ մի հոգնած գոմեշ էր գնում, կտրեց խճուղին, կորավ ձորում ու մայրամուտի մեջ կապտեց բլրաշարի ուսագծին: Հետո բոլոր թփուտներից դուրս թռան հովերը, միացան, խառնեցին ցերեկվա բոլոր բուրմունքները, բայց ոչ մի հով չէր բերում գոմշացուլի կանչը: Հովտում շաղախվում էր տխուր աղջամուղջը, սարերի կատարներին մոմերի պես հանգան սառն արևները, գոմեշը բլուրների գլխից մռլնգաց դեպի անհայտություն և իջավ, մտավ հովտի մթան տակ:

Լռությունը հյուսվում էր ջրի ձայներից: Մի քիչ էլ թաղվելով նրա աղմուկի մեջ՝ գոմեշն զգաց, որ այդ ջուրը տաք ու հոտած է: Ապա՝ ձին կանգնել էր գլուխը բարձր, մինչև տեսավ որ մոտեցողը գոմեշ է: Հետո ձին կանգնել էր անշարժ, չէր արածում և խավարի մեջ տխուր էր: Մարգ առ մարգ ջուրն այդտեղ լճակներ էր տվել, փայլում ու չէր փայլում չղջիկների յուղոտ թռիչքի տակ: Գոմեշը կամ սխալվել ու բանջարանոց էր մտել, կամ ցանկապատը քանդված էր, ոտքերի մեջ փշփշոտ մի ճյուղ խճճվեց:

– Էդ ո՞վ ես,– ասացին:

Գոմեշը կանգ առավ:

– Չի՞ն ես, թե էդ ով ես:

Գոմեշը գլուխը կռացրեց, ուզեց անցնել ցանկապատի ճեղքով՝ իրար հյուսված չոր ճյուղերը ճռճռացին ու թափվեցին:

– Ախար էդ ո՞վ ես, է:

Թթված ձմերուկի հոտ էր գալիս, հետո հրացան պայթեց: Մի անգամ, աշնան եղյամների ժամանակ, գիշերը գոմեշը մտավ կաղամբուտ: Ցրտերի դեմ պինդ փաթաթված այդ կաղամբները հյութալի, քաղցր ու տաք էին, մեկ էլ՝ մոտը մի ստվեր ցատկեց, ու մեջքին ճայթեց ճիպոտը: Մարդը երկար վազվզում էր նրա ետևից և ուզում էր խփել նրա փորին, չէր թողնում ելնել ցանկապատի բաց դռնից, մինչև որ գոմեշը կրծքով քանդեց ցանկապատն ու մտավ հարևան բանջարանոց:

Արահետը նրա տակ անսպասելիորեն կենդանացավ, մի երկու կարճ ոլորանով ելավ զառիվերի գլուխը, ուղիղ գծով կպավ աղբյուրին, քանդված գոմերի դռներով գնաց մտավ անտառ: Կարծես դեմից, կարծես գոմերից՝ բուն երեխայի պես լաց էր լինում ու ճիվաղի պես քրքջում: Կենդանի հաճարենու ետևից կեսը երևալով սպիտակ շորերի մեջ մի կին էր կանգնել ու սպասում էր գոմեշին: Անհայտ մի տեղ դարձյալ լաց եղավ մոլորված երեխան, կենդանի հաճարենու ետևում ֆոսֆորային շողը ցնդեց և տակը մնաց ոտի վրա փտած կոճղը: Հետո կոճղը նորեն կին դարձավ ու լուռ հայացքով ուղեկցեց գոմեշին լուսատտիկների բացատ:

Ծծերը կողերից հատ-հատ կախ, երկարոտն, լայն կրծքով ու նիհար պինդ գանգով գայլն անաղմուկ անջատվեց թփից, երկու ցատկով նետվեց կապանի բերան ու դաջվեց քարին: Գետինը հանգիստ օրորվում էր մեկի քայլերի տակ, քայլերը դանդաղեցին ու դարձան մտածկոտ: Քայլերը կանգ առան: Գայլն աչքերը փակեց ու

շունչը պահեց՝ որ լինի լրիվ մեռած ու լրիվ մութ: Քայլերն զգույշ փոխվեցին:

Գոմեշը քայլեց, բայց կապանը դարանած էր: Գոմեշը կանգ առավ՝ կապանը կապան էր, արահետը սապատավորվում էր կապանով: Գոմեշը քայլեց՝ սապատը շնչում էր. գոմեշը կանգ առավ, սպասեց. սապատը շնչում էր, կապանը խեղդվում էր գայլի կծված հոտերի մեջ: Գոմեշը զզվանքով փնչաց, կճղակներն ու քարերը ջարդրտելով ելավ կապանի սալը, ճակատ պահած կանգնեց նեղուցում:

Գայլի միջից նրա աչքը կոպի նեղ ճեղքով զատել էր միայն մի մռութ, և իրենից գայլից բացի ոչ ոք չգիտեր, որ սալին ընկած այդ քարը քար չէ: Գոմեշի հայացքն անցավ քարի վրայով, գայլի վրայով, քարի վրայով, արագ հածեց գայլի շուրջն ու ծանր նստեց նրա գանգին: Եվ գայլը դանդաղ փշաքաղվեց, դանդաղ ելավ, չորս թաթի վրա չռված տարուբերվեց արահետին և, ժանիքավորվելով, տեր կանգնեց իր նպատակին:

Գոմեշը եկավ նրան տրորելու՝ նա մի քիչ էլ համբերեց, սպասելով թե գոմեշը կխրտնի, բայց գոմեշը գալիս էր տրորելու, և նա ետ ցատկեց ու սպասեց չռված: Գոմեշը գալիս էր միայն տրորելու, և նա կրկին ետ ցատկեց: Դունչը գետնին քսելով գոմեշը գալիս էր տրորելու, խիճը նրա տակ խրվում էր գետնի մեջ, և պոչը ոտքերի արանքում՝ գայլը մի քիչ դեն քաշվեց արահետից: Գոմեշի վիզը լիքը միս էր, բուկը լիքը միս էր, կուրծը լիքը... Գոմեշը կանգ առավ ու պահանջեց շատ հեռանալ արահետից՝ նա մի քիչ էլ ետ գնաց: Գոմեշը գլուխը թափահարեց ու փնչաց և նրա հուժկու շունչը կպավ նրա գանգին ու մի քիչ էլ ետ մղեց: Գոմեշը կատաղեց ու դղրդաց, և նա հեռացավ արահետից: Նա տանն ուներ չորս լակոտ, որոնք մինչև արյուն քաշքշում էին պտուկները. նրանք ցամաքել չթողեցին մեռած լակոտի պտուկը. տղա զավակը զավթել ու երկու պտուկ է ծամծմում. նրանց հայրը գնաց ոչխար բերելու և ետ եկավ պատառոտված. տխուր-տրտում մի քիչ մնաց տանն ու հեռացավ՝ մեռնելու թաքուն մի տեղ:

Գոմեշի քամակը թախիծով օրորվում էր արահետին, ոտքերի արանքում մի բերան փափուկ կուրծ կար: Միայն կե՛սը, միայն մի քի՛չ, մի բերա՛ն, կո՛ւրծը, փափո՛ւկ... աշխարհը կտոր-կտոր եղավ ու հալվեց:

Մի դար թե մի պահ աշխարհը պղտորվում էր, հետո լցվեց լույ-

սով ու շշուկներով: Տանը չորս լակոտ կա, մեծագլուխ արուն երկու պտուկ է ծծում, իսկ գոմեշը քացի տվեց: Կյանքը քաղցր ու լեղի էր: Ձլերից ու ծուծերից կաթ էր քամվում կաթի երակների մեջ և տաք մաղձը մաշում էր ստամոքսը: Հարկավոր էր ցատկել գոմեշի մեջքին, խրվել ու դուրս տալ նրա վիզը: Թող մի օգնականները մեծանա՜ն, թող մի արուն բոլորի՜ տարին... Տեր, եթե մեզ դժվար կյանքի համար ես ստեղծել՝ քո բանն է, միայն թե մի քիչ օգնիր, որ մեր կաթի մեջ մաղձ չծորա, թե չէ լակոտները կմեծանան ջղային ու անօգնական:

– Բասար, էդ ի՞նչ ես տեսել,– ասաց նախրապանն իր շանը:

Անտառը ճռճռացնելով նա ելավ բացատ ու կարոտով մռլնգաց: Կովերը բարձրացրին գլուխներն ու չճանաչեցին: Երնջի կրակներից շիկացած ցուլը ետ դարձավ ու նրան առավ իր կատաղի թշնամության մեջ: Իսկ նա կովերի մեջ գոմշացուլ փնտրեց:

– Էդ ո՞ւմ գոմեշն ես, էդ որտեղի՞ց ես գալիս:

– Ցուլ ես ուզում: Չկա,– ասաց նախրապանը:

– Դո՜ւ... Ծմակուտի գոմեշ ես: Դու Մանիշակ նանի գոմեշն ես: Ախչի, էս սարերով, էս ձորերով, էս գողի ու գելի միջով էդ ո՜նց ես եկել, ախչի: Նանն ուրեմն դեռ կա: Խեղճ նրա տղեն ճակատից չեկավ: Ես լուր պիտի բերեի, որ Սև ծովում ձկներոց է եղել, բայց դե բերանս բարով բացեի:

Ցուլը դանդաղ ընդառաջ էր գնում նրան և քրքրում էր մրջնաթմբերը: Իսկ նա կովերի մեջ գոմեշ էր փնտրում և դժվար հասկացավ, որ ցուլը գալիս է կռվի: Նա կեռեց վիզն ու գնաց հատ-հատ քայլերով: Նա ամբողջ բացատի տաք օդը ներքաշեց թոքերը ու գնաց ցատկերով, բայց դեմը ճակատ չկար. ցուլը քամակ էր դարձրել, նախրապանը կովերի մեջ էր քաշում ցուլը:

– Բա աղջիկ է, չէ՜, բա աղջկա հետ կկռվե՞ն, աղջկա հետ չեն կռվի:

– Ախչի, բա աղջիկն էդքան կռվարա՞ր կլինի՝ որ դու ես: Էսպես սիրուն, էսպես կլոր, էսպես պինդ... Տասը տարի է գոմեշի մածուն չեմ կերել: Էս ո՞վ է կուրծդ խազել, շո՞ւնը թե գելը: Սպասիր, մի սպասիր... Ինչ էլ խորն է մտել անտերը:

Գոմեշը նախրապանի դեմից փախավ, ետ դարձավ դեպի նախիր. այնտեղ պիտի լիներ մի գոմշացուլ, կովերի արանքներով նա պտտվեց նախրի մեջ, մեկ առ մեկ հոտ քաշելով նա երկար փնտրեց գոմշացուլին՝ նրանք բոլորը կովեր էին, ուտում ու կաթնակալում էին, նախրից կաթի հոտ էր գալիս: Նրանք հանգիստ ու

վստահ էին, որովհետև խոտը համեղ էր, ջուրը մոտիկ էր, իրենց մեջ խաղաղ ծփում էր իրենց ցուլի ներկայությունը: Գլուխն այդ նախրի միակտուր մեջքից բարձր՝ գոմեշը տխուր մռլնգաց այդ լույս երջանկության մեջ, և դա միայն հանգչելու-հատնելու ցանկություն էր:

Արև-աստծու տակ երբևէ դեպի տաք լճերն են օրորվել գոմեշների համայնքները: Վիզները բարակ, գլուխները մեծ, մեծ գլուխներին փափուկ-խմոր եղջյուրներ բլթած գոմշածագերը մանկան թախիծով օրորվել են մայրերի արանքներում, աղջիկ-գոմեշներն արևի տակ լցվել են թախծոտ մայրությամբ, գոմշացուլերը կանգ են առել, ետ են թեքվել ու կանչել են պղտոր կրքով՝ թե համայնքից որևէ մեկը չի՞ մնացել անտառի եզրին նստած,– օրորվեցին, օրորվեցին խարկված դաշտերում և ո՞ւր կորան:

– Քեզ ո՞ւր ուղարկեմ, որ քեզ համար լավ լինի: Արի քեզ ուղարկե՞մ...

Նախրապանը նրան ծեծեց: Նա մղվում էր դեպի Կեչուտ, իսկ Կեչուտն արդեն գործարան էր, փայտը գոլորշով լավ եփում էր, ճկում էր, պտուտակները ձգում և աթոռներ ուղարկում Պարսկաստան: Գոմեշը ետ նայեց՝ նախրապանը ձեռքով ասում էր գնա, գնա, գնա... Նախրապանը կռացավ իբր քար վերցնելու՝ գոմեշը թափ տվեց գլուխն ու գնաց:

Անտառի եզրին բոխիների միջից նայում էր կանաչ մատուռի մութ դուռը: Մատուռի մոտ քարը շարժվեց ու դարձյալ մնաց անշարժ: Նորից շարժվեց, և դա մարդու թիկունք էր: Պառավը, որ խաչքարին մոմ էր փակցրել և հովից պատսպարում էր՝ որ չհանգչի, ետ դարձավ ու խաչակնքեց: Եվ մինչև աղոթքի վերջը չհավատաց, որ իրեն նայողը մահը չի, գոմեշ է: Որ երազ չէր՝ դա լավ էր. գոմեշը երազում՝ ծանր հիվանդություն ու մահ է: Հայացքը գոմեշին՝ նա ձեռքով գտավ ձեռնափայտը և,– Հիսուս Քրիստոս,– իջավ, մտավ ճանապարհ:

Նրանք մի լավ նայեցին իրար, գոմեշը քայլեց, և պառավի սիրտն այդ ժամանակ բռնվեց. Մանիշակ քվեր գոմեշն էր: Էս էլ քանի ձմեռ ինքը Ստեփան որդուն խնդրում է իրեն տանի մի աշունից մինչև մի գարուն թողնի Մանիշակ քվեր տանը, քվեր թոռը իրենց տանի էջ-միածին, առաջնորդի աջը համբուրեն, ասեն քո նվիրած կյանքից մենք գոհ ենք:

– Էս ո՞ւր ես գնում: Քույրս քեզ ծախե՞լ է, թե՞ էս ուր ես գնում: Աղջիկ էի, զուռնով-դհոլով սարերո՜վ, սարերով ինձ բերեցին երեք օր ու

գիշեր: Իմ քույրը լաց էր լինում իր քվեր համար: Իմ ախպերն ունքերը կիտել էր ու ձի էր նստել: Իմ լավ ախպերը, տասներեք տարեկան իմ ոսկի քույրը, իմ տխուր հայրիկը:

Սակայն պառավը գոմեշից ետ էր մնում:– Ա՛յ տղա,– որևէ մի տեղից օգնող երեխայի սպասեց պառավը, սակայն իրենից բացի ոչ ոք չկար հնձած սպիտակ արտերում, ուր ծաղկած կորնգանը խուսափուկ լույս էր արձակում: Պառավի աչքերը ցավեցին, և գոմեշը հալվեց ու կորավ արևի տակ: Պառավը գնաց գյուղամիջերում հեռախոսից հասկացող մարդ փնտրելու՝ որ զանգահարեն Կեչուտ՝ որ զանգահարեն Երևան՝ որ զանգահարեն Գուգարք, էնտեղից էլ Ծմակուտ, Ծմակուտի կանաչ սարերը, իր քույր Մանիշակին՝ թե քո Սաթիկ գոմեշը եկավ ու անցավ Ձորագյուղով, քույրդ տեսավ, չկարեցավ կանգնեցնի, «ծախե՞լ ես, թե՞ էս ուր էր փախած գնում»:

Արահետի վրա մի տղա ու երեք աղջիկ էին նստել, անտարբեր նայեցին դեպի գոմեշը, հետո, նախրով հովտի փոխարեն, կայծկլտաց լույսի մեջ թե՜թև թեթև լիճը: Ավազին պառկած տղաներն ու աղջիկները երկշաբաթյա իրենց զրույցներում բանաձևել էին.– եթե ես գրում եմ, նկարում եմ, վազում եմ, սիրում եմ, ցատկում եմ, հագնվում եմ՝ ուրեմն ձգտում եմ ինքնահաստատման՝ ուրեմն կարծում եմ թերի եմ. եթե ես չեմ գրում, չեմ նկարում, չեմ վազում, չեմ սիրում, չեմ ցատկում, չեմ հագնվում, այլ ինձ համար այսպես մերկ պառկած եմ այս լճափին՝ ուրեմն չունեմ ինքնահաստատման կարիք՝ ուրեմն չեմ ուզում բազմացնել կամ կոփել իմ տեսակը՝ ուրեմն ինքնասիրահարված չեմ՝ ուրեմն թող կորչի իմ տեսակը, որը ես չեմ համարում եղածների մեջ լավագույնը և ապրելու արժանին... բանաձևել էին նրանք ու պառկել ավազին: Մերկ, թուխ, գոհ ու հանգած՝ ավազի ու իրենց ձեռքերի վրայից նրանք բարձրացրին գլուխներն ու տեսան գոմեշին գեղարվեստի փիլիսոփայության ու Վագների երաժշտության մեջ: Հետո, երբ ուզեցին հիշել որ տեսել են արևի տակ ինքնաթիռի ստվեր թե սատանա՝ գոմեշն այնտեղ չէր, իսկ բարձրախոսը միայն պսպղում էր սպիտակ սրահի քիվին և դեռ չէր կանչում ճաշելու: Հայտնի չէր, թե ովքեր են նրանք, որտեղից էին գալիս այդ լճի ջրերը, որտեղից էր բերված ավազը, ինչից էր հյուսվում ու գալիս-մտնում խոհանոցի վառարան էլեկտրահոսքը և որտեղից էին սնվում նրանց ուղեղները՝ որ կարողանում էին գնդել փափուկ ենթագիտակցություններ: Ներողամիտ սիրով նրանք էսքիլեսի հետ համաձայնել էին՝ որ նա գիտե թե ինչ է ողբերգությունը,

միմյանց աչքով էին արել և շուռ էին եկել ու իրենք իրենց մեջ վճռել, թե ամենաողբերգականը քսաներորդ դարն է, քսաներորդ դարում՝ իրենք, քանի որ ողբերգությունը գիտակցելն է, այլ ոչ թե նրա մեջ ապրելը: Նրանց զգայարաններում՝ այդ լիճը ճիշտ տեղին էր բացված, ավազը հարմար էր փռված, հեռու դաշտերում մեքենաները հաց ու ձկնկիթ էին անում, բժշկուհիների սպիտակ գումարտակները խածում էին երեխաների թմբլիկ թևերը, դեսպանները թարմ թաշկինակներ էին խոթում բաճկոնների գրպանները, գազամուղները գազ էին քշում տափաստաններով ու կիրճերով, և այդ ամբողջը նրա համար էր, որ նախաստեղծ իրողությունների բազմության խառնուրդից իրենք համբարձեն ժամանակի ու հողագնդի իմաստը արևային համակարգության մեջ: Իսկ նրանց արգանդներն ու ողնաշարները այդպես սմքում էին ժամանակի տարտամ գոլությունից:

Մեկ էլ՝ օդը գոմեշի քթերի տակից սարալանջով մեկ սահեց ու չքացավ: Գոմեշը կանգ առավ. ծաղիկները, մեղուները, տերևները, ցողունները հյուսում էին նոր օդ, մթնոլորտում դարձյալ իրար էին գալիս ուրցի ու դաղձի բուրումները: Գոմեշը քայլեց:

Միալար խաղաղ աղմուկով, ապա թխկոցով, թխկոցով, թխկոցով, տոթով, գոլորշիով, շչոցով, կարբիդի խեղդուկով, շարժմամբ, զնգոցով, բոցերով ու անկենդան ուժգնությամբ գոմեշի ճանապարհը փակեց անըմբռնելի մի բան, որ երեկ չկար: Անտառուտ կապույտ լեռներից մինչև ժայռուտ լեռներ նա բոլոր տերևների արանքներից, ծառերի փչակներից ու ծաղիկների բաժակներից սրբելով ներքաշեց բոլոր բույրերն ու հովերը, տաքացրեց, շիկացրեց ու կարբիդի կծու բոց փչեց գոմեշի վրա: Երկաթին երկաթ զոդեց, ասֆալտին տաք ասֆալտ փռեց, հալեց կավը, դարձրեց թուջ և սրբելով նորեն ներքաշեց բոլոր բույրերն ու հովերը մի օրվա ճանապարհի շրջագծով, մի արծվի թռիչքի բարձրությամբ անտառուտ լեռներից մինչև ժայռուտ լեռներ: Բոլորը մնացել էին նրա բետոնների տակ՝ հին կանաչ հովիտը, կաղնի միակ ծառը, փոքրիկ եղեգնուտը, չորս հատ կակաչը, մասրենու թուփը, վայրի մեղուների բրդոտ ընտանիքը, գարու սպիտակ արտը, գոմշացուլը, նախրապահ կարմիր գամփռը, հորթը, գոմեշների ոտնահետքերը՝ բոլորը մնացել էին գետնի տակ: Բայց չէ՞ որ կարող էր վատ բան լինել, քանի որ գոմշացուլը մնացել էր գետնի տակ, իսկ հին հավատն ասում է, թե կարմիր կովը գետնի տակ բառաչում է և երկրաշարժ է լինում:

Գոմեշը կանգնել էր քարի գլխին կածանի բերանին և կասկածների մեջ վախվխում էր:

Հարբած վիճակում հասարակության լուսամուտների տակ երգելու համար նկարիչ Ռուբեն Կոստանյանի գանգուրները միլիցիան խուզել էր և նրան չորս օրով տվել ասֆալտ եփող-մամլող հիմնարկին: Նրանք նրա ձեռքը լողտորք էին տվել, նա ասֆալտը բահով փռում էր ու լողով լողում տաք ծյութավազը հին ասֆալտին: Նա կպչուն ծխի միջից տեսավ քարի գլխի գոմեշը, ցատկեց-ջարդեց լողի տորքն ու բերանքսիվայր խփվեց սև ասֆալտին:– Սրիկանե՜ր,– ասֆալտը ճանկռտելով աղաղակեց նա,– ստորնե՜ր... բռնադատիչնե՜ր... Ինչո՞ւ ազատ են լեռան գոմեշը, թռչունը, քամին, թուփը, իսկ ես ազատ չեմ: Մամլակնե՜ր, խորանարդնե՜ր, քառակուսինե՜ր, ջարդող-կտրող-խուզող-ռոբոտնե՜ր, ձևողներ...– Եվ երբ գլուխը բարձրացնելով նա դերասանության, ծյութի, անկեղծության ու գոլորշու միջից կրկին նայեց դեպի քարի գլուխը, նրան թվաց թե գոմեշը սավառնում է քաղաքի վրայով ուղիղ դեպի կապույտ հորիզոններ:

Հին գոմշարած Տիգրան պապը գլուխը կրծքին նստել էր վեցերորդ հարկի պատշգամբում, քաշում ու մոռանում էր տերողորմյայի հատիկները և ասում էր մահվան քաղցր կանչի, աստծու հիշողության ու քաղաքային տոթի միջով.– էն գոմե՞շ է, թե սուտ է... էն գոմե՞շ է... Ամեն ինչ էլ վերջ ունի... Հետո Լևոնը ձին քշած եկավ թե... էն գոմե՞շ է, թե սուտ է... Բարի-չար-աստված, բարի-չար-աստված...

Գոմեշը թողեց կածանը, գնաց քաղաքը շրջանցելու: Արևը հատավ հանգավ, իսկ քաղաքը քարի տակով գնում էր ու վերջ չուներ: Գոմեշը թախիծով մռլնգաց դեպի ծիրանի արևը՝ թե նա ինչու է լքում իր զավակին այդ թշնամի աշխարհում, ապա քարի գլխին մնաց մենակ: Ջորը լցվում էր գիշերով, խառը խիտ աղմուկը պատռվեց ու ցանցառացավ և ապա մաշվում էր թել առ թել, հետո ծորում վառվեց միանգամից միլիարդ ճրագ ու լուսե տանիք կապեց քաղաքի գլխին. կար-ծես թե կարելի էր քայլել քաղաքի գլխով դեպի հեռու լեռներ: Ջո-ը խաբում էր: Գոմեշը մոտենում էր անդնդի եզրին ու ետ էր քաշվում: Գնում էր քարի գլխով՝ որ գտնի քաղաքի վերջը, մոտենում էր անդնդի եզրին ու ետ քաշվում: Մեկ էլ հարազատ մի բան քսվեց նրան, փաղաքշեց ու պարուրեց ամբողջությամբ. դա կթվելու կարո՞տ էր թե Բասար շունն ընդառաջ ելավ արևի մեջ փռված հատիկի մոտից կամ հեռավոր մշուշների մեջ տաք ու խուլ մռլնգում էր

գոմշացուլը: Տան ճանապարհները խճճվում էին հիշողության մեջ, նանի գլխաշորի հոտը կորել էր քթերից, գոմշացուլը կանչում էր ու չկար, սուտ էր,– գոմեշը մի քիչ լաց եղավ:

Քաղաքը հանգիստ մրափ էր մտել: Լուսանալու դեմ ցրտեց: Գոմեշն արդեն քաղաքի ծայրին էր: Մի շուն էր հաչում, բայց իրեն երևալ չէր տալիս, հետո ծուղրուղու կանչեց աքաղաղը: Գոմեշի քունը տանում էր, իր ոտքերի ձայնը լսում էր խուլ հեռուներից: Ոչխարի խոնավ բրդի հոտ եկավ, բայց դա խաբկանք էր, քանի որ սարերը մնացել էին հեռվում: Ոչխարի մայուն եկավ, հետո նանն ասաց. էսօր շատ կաթ ես բերել, ապրես: Գոմեշը գայթեց, մի քիչ արթնացավ ու կանգ առավ, երկիրը դողում էր ոչխարի մանրիկ քելքից: Գոմեշը հովվի սուլոց լսեց, և դա խաբկանք չէր: Մի ոչխար, նույն ոչխարը, երեք անգամ մայեց: Հետո զառիվերի գլխին կանգ-նեց, փռշտաց ու զառիվարեց ների այծը դեպի գոմեշն ու քաղաք: Զառիվերի գլխին ապա կանգնեց ու մի պահ տատանվեց ոչխարի հոտը և թափով հոսեց դեպի քաղաք:

– Պահ, պահ, պահ,– ծաղրեցին ուղեկցող հովիվները,– քաղաքը զարգացել է, գոմեշ է պահում:

Նրանք հարազատ էին, հոտն էլ, միակ գամփռն էլ, և նրանց հետ՝ գոմեշը քաղաքից չէր վախենում,– բայց նա այդ հովիվներին մեծ հոգսի տակ դրեց. մեկնումեկը նրանց ականջին հանկարծ փսփսաց, թե այդ գոմեշն անտեր է, կիլոն երեք ռուբլի բազմապատկած երեք հարյուր կիլո՝ ինը հարյուր ռուբլի. հարյուրը հարցնողաց՝ թե էդ ինչ միս եք ծախում, ուրեմն ութ հարյուր ռուբլի բաժանած երկուսի: Այս լի աշխարհում հասարակ գողությունն ամոթ է, Սիբիրն առավել ևս, իսկ չգողանալը նույնպես դժվար է, որովհետև հետո անընդհատ պիտի հիշվի, որ չես գողացել ու պիտի զղջացվի: Ո՛չ, լինում է հիմարների մի տեսակ, ասում է «էդ ի՞նչ միս է», ասում ես «գոմեշի միս է», դարձյալ ասում է «էդ ի՞նչ միս է» և ձեռքիդ չի նայում, այլ աչքերիդ է նայում: Լուսամուտները սև՝ քաղաքը թաքուն ունկնդրում էր նրանց տագնապներին ու հոտի քելքը: Ո՛չ, ավելի լավ է դու քեզ-նից ամաչես, քան ուրիշից չամաչես և պատասխանատվության բե-ռումով ցույց տաս թե ամաչում ես: Երկրորդ հարկի լուսամուտից ծխախոտի կրճոնը գցեցին ու հարցրին.

– Էդ ոչխա՞ր է:

– Ոչխար է: Բարի լույս:

– Էդ էլ գոմեշ է,– ասացին երկրորդ հարկի լուսամուտից:

Փողոցի լապտերներն արդեն-արդեն դեղնում էին: Հոտի հոգնած քելքը լցրել էր շենքերի արանքում փողոցը: Ինչպես քարայրի մեջ՝ արծագանքով մայեց նույն մրսած ոչխարը: Եվ տարօրինակ էր, որ այս անկենդան աշխարհում լինեին փարախ, կրակատեղ, հսկումի մրափ մտած շներ: Եվ դժվար թե այս ճանապարհը վերջանար արոտներով: Գոմեշն աղի արյան համ առավ և տեսավ պաղած աչքեր պաղած գլուխների: Գոմեշի ջղերը համակարգ առ համակարգ կաթվածահար էին լինում առանց ցավի, գոմեշը մի տեսակ ընկղմվում էր գոլ ջրի մեջ, և կարող է խեղդվեր ու ենթարկվում էր խեղդվելուն: Եվ իրականում, երազում թե նրա ահերի մեջ՝ թռչունի թե մահի մի թև թրթփաց հոտի վրա, և գոմեշը խլացավ:

Հոտը դարպասների դեմ կանգ էր առել ու փշաքաղվում էր: Հոտապահ գամփռը ծմրում ու ետ-ետ էր անում, հետո հպվեց գոմեշի ոտքերին, ուզում էր իր ձայները կուլ տալ, ու հանգավ: Մեկը ջերմ թմբիրի մեջ հալում էր հոտի ջղերը, վախերը, դիմադրությունը, և հոտի վրա փափուկ նիրհ էր մաղվում: Ապա դարպասները ճեղք տվին, ետ գնացին, մտան պատերի մեջ, և գոմեշը տեսավ մի զույգ անթարթ աչք, որ խավարի մեջ, հոտի դեմից, ետ էին լողում, մարում էին ու դարձյալ սևեռվում կանաչ ու անքթիթ: Հոտը, ասես գետնից կտրված, խաղաղ ու փափուկ մղվեց դարպասներից ներս, մեկը շոյում էր գոմեշի ջղերն ու դուրեկան ուժով հրում դեպի դարպասները: Հետո մեկը գոռաց գոմեշի վրա, և դա հովիվն էր: Հովիվը մահակի ծայրը դրեց նրա ականջի տակ, սեղմեց, ծռեց նրա պարանոցը, թեքեց նրա գլուխը դեպի ետ, գոռաց ու խփեց՝ արթնացրեց նրա ջղերը:

– Գնա, քո ժամանակն էլ կգա, հիմա գնա տիրոջդ գտիր:

– Գնա,– ու խփեց մահակով:

Ինչ-որ մեկը նրան դեռ ետ էր քաշում, ոտքերը թաղվում էին կարծես թե կավացեխի մեջ, ամեն քայլի նա համարյա թե գայթում էր, բայց հովիվը կոշտուկոպիտ էր խփել, ցավը կրծում էր նրա ողերը, նա շողիքով ուզում էր վար բերել ցավը կռնակից, սակայն ցավը կզաքիսի պես կպել էր ու պոկ չէր գալիս և նրան հալածում էր այդտեղից հեռու:

Քաղաքային բզկտված մի շուն մի քիչ ուղեկցեց նրան, նրա հետ հարազատություն թե ծանոթություն փնտրեց ինքն իր մեջ, կանգ առավ, մի քիչ մտածեց, բայց հիշողության կապերն իրար չէին գալիս նրա շփոթված գլխում, և նա ձեռ քաշեց այդ դժվար բաներից, գնաց դեպի սպանդանոց:

Այդ պահին զբոսաշրջիկների երիտասարդական ճամբարում Երվանդ Խաչատրյանը սառը ջրով լվացվում էր ու իրեն ասում, թե ինքը պինդ տղամարդ է, հայի նման կրքոտ է ու եվրոպացու չափ կիրթ, և որ ռուսերենը, անգլերենի չափ, միջազգային լեզու է, իսկ լեհ աղջիկների այդ քառասուն հոգին, մեկը մյուսին խանդելով, մինչև ականջաբլթակը սիրահարված է իրեն, որովհետև ինքը թուխ է, բրդոտ ու զուսպ:

– Նախաճաշի համար՝ տասնհինգ րոպե,– այդ աղջիկներից ոչ մեկին չնայելով հրահանգեց նա:– Վարպետ, կարծում եմ տասնհինգ րոպեից մեքենան սարքին կլինի,– վարորդին չնայելով ասաց նա:

Հայաստանը զարգացած քաղաքների, լավ ճանապարհների ու հնագույն շինությունների երկիր է: Հայ ժողովուրդն աշխատասեր ու հյուրընկալ ժողովուրդ է: Եթե թուրքերը մեր կեսը չջարդեին, այդ ժողովուրդը կարող էր հյուրասիրության սփռոց բացել ամբողջ աշխարհի համար: Մեր ժայռերը վայրի ու խոժոռ են, բայց ոչ մի թաքստոցում ավազակ չկա՝ որ դաշույնը ձեռքին դուրս գար, վախեցներ ու բռնաբարեր զբոսաշրջիկներին: Ահա թե ինչու է այս փոքրիկ Հայաստանը կոչվում հակադրությունների երկիր – մի կողմից՝ խոժոռ ժայռեր, մյուս կողմից՝ սիրալիր մարդիկ:

Մեքենան ճղճղալով ազդանշաններ տվեց ու կանգ առավ: Մի տարօրինակ արարած խճուղով դանդաղ օրորվում էր և միտք չուներ ճանապարհ տալու մեքենային: Վարորդն իջավ, նրան եզր քաշեց, եկավ նստելու ղեկին, բայց նա դարձյալ կենտրոն էր մտել ու գնում էր օրորվելով: Երվանդ Խաչատրյանը գլուխը լուսամուտից հանեց՝ կշտամբելու նախրապանին, բայց նախիր չկար, գոմեշը մենակ էր: Մեքենան ճչալով գնաց, խրտնեցրեց նրան, բայց նա ճանապարհից դուրս չէր գալիս: Այդ ժամանակ մեքենան թեթևակի խփեց նրան, և լեհ աղջիկներն ասացին.

– Այս հայերը հախուռն ու կրքոտ ժողովուրդ են:

Երվանդը մեքենայից իջավ, ճանապարհից մի կողմ քշեց նրան,– նրա կուրծը խազված էր,– նրա ականջից բռնած սպասեց մեքենայի անցնելուն և ապա ցլամարտիկի լրջությամբ բարձրացավ մեքենա: Այդտեղ, մեքենայի մեջ, տաք ծնկների, կանաչ ակնոցների, անկրծկալ պինդ կրծքերի թրթիռի և միջազգային քաղաքավարության ու սեռային թաքուն դաշինքի մեջ, նա ասաց՝ մարզիկի իր նստուկը դնելով հարմարավետ նստարանին.

– Դա կարծեմ կոչվում է գոմեշ: Կովկասյան լեռներում դեռ կան մի երկու անասնապահ ցեղեր: Լեհահայ առաջին գաղութներն ստեղծվել են դեռևս խոր միջնադարում: Ձեր ժողովուրդը լավ է ընդունել մեր պապերին՝ ընդհուպ մինչև համայնքների ներքին ինքնավարություն: Հայտնի է, որ Գրյունվալդի ճակատամարտին մասնակցել է հայերի մի գումարտակ: Կինոբեմադրիչ Եժի Կավալերովիչի լեհ երակներում հայի արյուն է պտտվում: Յուրաքանչյուր հայ Լեհաստանում կարող է դառնալ Եժի Կավալերովիչ, քանի որ յուրաքանչյուր լեհուհի տաղանդավոր դերասան է: Ուշադրությո՛ւն, սկսում ենք վերելքը դեպի Աղավնավանք: Վանքը կառուցվել է ութ հարյուր քսանհինգ թվականից սկսած: Ճարտարապետն անհայտ է, պայմանավորվենք կոչել Տրդատ: Այդ անունը մենք որտեղի՞ց ենք հիշում: Տը՛րդա՛տ: Հիշում ենք Անիի ավերակներեն...ից...– և խմբավարի պես մի քիչ խոնարհված, փողկապը վզից կախ ու ակնոցները կանաչ՝ նա դաջվեց աղջիկների տպավորություններին ու լուսանկարչական ժապավեններին:

Հետո նրանց բոլորի ակնոցավոր գլուխները գմբեթին պարզած նրա ձեռքից շրջվեցին ետ՝ մռլնգոցի վրա: Գոմեշը ճարտարապետության հետ կապ չուներ, և նրանք ժպտացին: Երվանդ Խաչատրյանն իրեն թույլ չտվեց դուրս ընկնելու նրանց ուշադրությունից:

– Քնարական շեղո՛ւմ,– հայտարարեց նա, և այնպես եղավ, որ հիմա ուշադրության կենտրոնում միաժամանակ նա և գոմեշն էին: Նա մոտ գնաց նրան, ակնոցների տակ աչքերը պինդ փակեց, պի՛նդ, բռնեց նրա եղջյուրը և, բռունցքը գրպանում, դեմքը դարձրեց լուսանկարչական սարքերին:

– Լուսանկարեք, հիշատակ Աֆրիկայից:

Նրա մեջքին, ողի վրա, ընկույզի չափ խիլ էր ուռել, գայլը թե շունը կրծի մեջ ատամ էին խրել, նա թրթռում էր բեղմնավորման երեքօրյա քնքշությամբ, պիտի որ նրա կուրծը ցավելիս լիներ, քանի որ պտուկները չռվել էին: Նա ցածր մռլնգում էր, և Երվանդ Խաչատրյանը հիմարի պես ծուռ ժպտալով քիթը վեր քաշեց: Եվ աչքերը փակ՝ ափով ոչ այն է շոյեց ոչ այն է խփեց նրա ուսին, նրան մի կողմ քշեց և հարցրեց ավելի շատ մտքում, ավելի շատ շշունջով.

– Էս ո՞ւր ես գնում... Ո՞նց ես, Սաթիկ ջան, ո՞նց ես, քույրիկ ջան... Նանը ոնց է... Բա ես ի՞նչ անեմ:

Մեքենան ազդանշան էր տալիս: Շրթունքները սեղմելով Երվանդ

Խաչատրյանը ելավ քարից և, զույգ բռունցքը գրպաններում, գնաց դեպի մեքենա: Ռուսերենը անգլերենի չափ հարգի լեզու է, կյանքից պետք է վերցնել շատ և տալ շատ, իսկ եթե հնարավոր է՝ չտալ: Դժվար կյանքն հիա՛րկե լավ է, բայց ավելի լավ է՝ երբ քեզնից հեռու է:

Հղիանալն անցյալ անգամ էլ դժվար եղավ: Ցուլը նա գտավ արդեն վերադարձի ճանապարհին, մի քիչ մնաց նրա մոտ, բայց չէր բեղմնավորվել: Մի երկու ամիս հետո նրա արյունը դարձյալ տաքացավ, և իր հին հետքերով միայնակ կաղնու հովիտը նա շուտ գտավ, երկու օր մնաց այնտեղ: Այդ տարվա ձագը ծնվեց ամառվա վերջերին, ցրտի տակ ընկավ, տնքաց, տնքաց, խռկաց ու մեռավ:

Գոմեշը կանգնած մնաց՝ մինչև որ ոզնին իջեցրեց փշերը, փոքրիկ գլուխը հանեց, նայեց պսպղուն աչքերով և գլդոր-մլդոր փախավ արահետից: Ապա շոգ մացառների մեջ մկկացին երկու այծ և ոտքի տակ ֆշշաց օձը: Արտի եզրին բառաչեց մի կով, որ ձիու պես պարանով կապած էր: Կովի կապե՞լը որն է: Արտում, իրար մոտիկ երկու տեղ, հասկերը շարժվում էին, ուրեմն գառներ էին մտել արտ: Հանդապահը չէր երևում, իսկ հեռու սարալանջին սպիտակին էին տալիս ուրթի վրանները: Գոմեշը մի քիչ գնաց արտի եզրով, ապա, որևէ մի տեղից իրեն հետևող հանդապահի համար անսպասելի, թափով մտավ արտ ու, ականջը կանչի, գնաց վազքով: Հասկերը խշշում ու շոյում էին կուրծը, գոմեշը ցուլի թրթռուն ներկայություն էր զգում: Դա գրեթե իրական երջանկություն էր, բայց արտը միանգամից կտրվեց ասֆալտած խճուղով, խճուղու եզրին լուսավոր մի մեքենա էր կանգնած, մեքենայի մոտ խոտերի մեջ նստած էր ճաղատ, գեր, բարի էդվարդ Հայրապետյանը և իր հետի կանանց ասում էր լավ բառեր, որոնք մեռած էին, որովհետև միայն բառեր էին: Նա ճաղատը սրբեց թաշկինակով և, դեմքը գոմեշին, հիացավ.

– Տո՜ր ո... Ախ, անուշ ջան, ինչ սիրուն ես,– ասաց նա գոմեշին և սուտ ասաց, որովհետև գոմեշը գեղեցիկ չէր: Հետո նա կանանց պատմեց իսպանական ցլամարտի մասին և պատմեց գեղեցիկ, սուտ ու մեռած, որովհետև խճուղին կտրողը ցուլ չէր, այլ էգ գոմեշ, որ գնում էր բեղմնավորվելու: Հետո նա գովեց այդ կանանց ծնկների կլոր ողորկությունը, բայց այդ ծնկները նրա համար մեռած էին, այլապես նա չէր գովի այդքան անշփոթ ու երկուսինը միաժամանակ: Հետո նա այդ կանանց արձակ-համարձակ բացատրեց, թե բնապաշտությունը պետականորեն չի հովանավորվում, բայց ինքը

համոզված բնապաշտ է և բնապաշտությունը համարում է մոլորակի ողբերգական ճակատագրի միակ ելքը,– սակայն դրանք միայն բառեր էին, քանի որ գոմեշը, կայծակը, խոտհունձը նա սիրում էր այդ օրը կերած քաղցրավուն խաշիլի ուժով ավտոմեքենայի միջից: Նա այդ կանանց բացատրեց, թե այդ ցուլի եղջյուրները քոր են գալիս և նա գնում է կռվելու մի ուրիշ ցուլի հետ, որի եղջյուրների արմատները նույնպես քոր են գալիս հանուն տեսակի գեղեցկության:

Դեպի ուրթ դժվար վերելքի վրա ամբողջ օրը հատավ, բայց սարալանջի վրանախումբը ուրթ չէր: Երկրաբանները ծակիչներ էին դրել ու երկիրը ծակծկում էին: Նրանք մեքենան անջատեցին ու ասացին գոմեշին.

– Բարով եկար:

Գոմեշն անցավ՝ որ գնա, ապա տեսավ՝ որ ոտքերը ցավում են և գնալու տեղ չունի. նա ետ նայեց, մռլնգաց, մի երկու բերան խոտ պոկեց ու եկավ ապավինելու երկրաբաններին. վրանների արանքում քամի չկար, գոմեշը պտույտ-պտույտ արեց ու նստեց վրանների արանքում, ապա թե ոտքերն իր ծանրության տակից հանեց, գլուխը դրեց գետնին ու քնեց: Ծակիչները շեշտով թխկթխկում էին, գոմեշն օրորվում էր մի տեսակ օդում, հետո բոլորովին քնեց:

Երազի մեջ նա լիզում էր այն տարվա իր արու տխուր ձագի փափուկ եղջյուրների մեջտեղը, ձագը նվում էր թույլ տնքոցներով, հետո նանն ու նախրապահ Մինասն իրեն խաբել էին. իր ձագի բրդոտ կաշին գցել էին հորթի վրա և աղաջրով թրջել: Երազի մեջ նա լիզում էր իր հիվանդ ձագի մեծ գլուխը և լաց էր լինում, և փափուկ վիշտը դուրեկան էր քնի պես: Հետո իր ձագի բրդոտ կաշին ետ սահեց և տակը դողդողաց կովի հոտով հորթը. ինքը մռութով դեն հրեց նրան ու բղավեց:

Գոմեշն արթնացավ, նայեց պղտոր աչքերով՝ ծակիչները շեշտով թխկում էին և օրորվում: Գոմեշն ուզեց վեր կենալ, բայց ալարեց. ոտքերը քաշեց տակը, գլուխը դրեց ուսին և նիրհեց: Կուրծը մի թեթև նեղվում էր. հիմա նանը կկթի: Նանն սկսեց կթել երգով, բայց կուրծը չէր պարպվում: Ինքը թուլացրեց կաթի երակները, նանը կթում էր փափուկ փխփխոցով, բայց պտուկները ծակծկվելով ցավում էին:

Նա արթնացավ կեսգիշերին, նստած՝ հիշեց թե որտեղ է ինքը, ականջ դրեց՝ աստղերի լույսի մեջ մեքենաներն ու մարդիկ հանգիստ քնած էին, աստծու աշխարհի ծայրին մի շուն էր ոռնում ու

մարմրում էր մի հովվակրակ, ցերեկվա մարդիկ վրանների մեջ տաք ու փափուկ շնչում էին, աստղերը սառն ու առողջ լույս էին ծորում: Նա ելավ, թարմ գիշերվա մեջ ձգեց մեջքը մինչև պոչը և սկսեց վրանների մոտ արածել: Երբ լուսադեմին դուրս եկան միզելու և նայեցին նրան՝ նա գլուխը կտրեց գետնից և կարճ մռլնգաց, հայտնելով իրենց անթշնամանք գոյակցության մասին: Նրանք ժպտացին և ասացին անչար.

– Սև ցա՛վ: Վախեցրիր:

Ներսում նրանք հարցրին խռպոտ ձայնով.

– Էդ ի՞նչ էր:

– Ոչինչ,– ասացին նրանք,– իրիկվա գոմեշն է, ասում է բարի լույս:

– Տերը հիմա փնտրում է:

– Գլուխ մի տարեք, քունս կիսատ է:

Լռություն էր, հետո մեկը խիստ բարկացավ, իսկ մյուսները խմբով ծիծաղեցին:

Առավոտյան նրանք նրան ասացին.

– Որոշեցիր մեզ մածուն տա՞լ: Ճիշտ ես որոշել:

Նա գնալու տեղ չուներ: Աշխարհն իհարկե մեծ է և յուրաքանչյուր անգամ ավելի է մեծանում, և արահետներն էլ խելացի ու շատ են, բայց աշխարհն անհամանում էր, որովհետև նրա վրայից ցնդում էր թախիծը և մնում էր առատ խոտը: Նա հասկացավ, որ մոտերքում մի տեղ նախիր կա, բայց անհանգստությունը նրա մեջ ծվարել ու քուն էր մտնում: Արահետից թաղիքի, շան, պանրի, շիբի ու ռետինե սապոգի հոտ էր գալիս, բայց նրա էությունը չէր կարողանում սարի մյուս երեսին ուրթ ու գոմեշներ դնել և նրանց կարոտից թրթռալ: Նա հենց այնպես ընկալեց աղբյուրի ջրերին կպած նախրի թարմ հոտը և, որովհետև ջուրը համով էր, խմեց գոմեշավարի ու կշտությունից տնքաց: Նա ճանապարհ չտվեց զույգ դույլով ջրի եկող քրդուհուն և հանգիստ ընդունեց շների հաչոցը: Սև, ուժեղ ու մեծ, հայացքը ծանր՝ նա կանգնեց հաչող շների մեջտեղը և սպասեց: Քուրդը եկավ, շների վրա գոռաց, մահակը գցեց, մոտեցավ, քորեց նրա ականջի արմատը, և այդ այդպես էլ պիտի լիներ: Քրդի մայրը եկավ, խոշոր կրծքերի տակ ձեռքերը խաչած նայեց նրան բոլոր կողմերից, պպզեց, տեսավ կուրծը, հաշվեց պտուկները, բոլոր պտուկներն էլ սարքին էին,– Մեկ, երկու, երեք, չորս,– ասաց նա և գոմեշի դեմ կանգնեց ու հիացմունքից շողշողաց:

– Շկո՜,– գոմեշի երեսին նայելով ասաց նա որդուն,– մերդ ծնկել ու քեզ տղա է ծնել, ինչո՞ւ չես մորդ համար մի գոմեշ առնում, Շկո:

Քուրդը գոմեշի ականջը բռնեց և տարավ վրանի դուռը:

– Աղ դուրս բեր,– ասաց նա մորը:– Էդ չէ, էն լավը: Պարան բեր,– կարգադրեց նա մորը:

– Մորդ համար մի հատ գոմեշ առ, Շկո՝ մերդ հարյուր տարի ապրի, երեխեքիդ պահի, ոչխարներդ կթի, Շկո, քեզ համար գոմեշի մածուն անի:

Քուրդը գոմեշի ուսը շոյելով գնաց, գավակը շոյելով պտտվեց, մեջքը շոյելով եկավ, եկավ քորեց ականջը և հանկարծ ճղեց ականջի ծայրն ու մոխիր քսեց: Քուրդը հիմա ունեցավ ձախ ականջի ծերը ճղած հիսուն ոչխար, մի գոմեշ, չորս կով, իրեք էծ, քուռակը տակին մի մադյան, էրկու շուն: Գոմեշի անունը՝ Նարղոզ: Ո՞վ է ասում թե մադյանն իբր ուրիշի է եղել, բաշպորտը հրեն, թող գնան բաշպորտը նայեն: Քուռակ ժամանակներից է մադյանն իրենը:

– Կթե,– ասաց նա մորը,– կուրծը լիքն է, կթե: Աղ լիզե,– ասաց նա գոմեշին,– ականջդ քիչ է ցավում, լիզե:

Քրդի մայրը կանգնել էր կռները խաչած ու լաց էր լինում, հետո ժպտալով ասաց որդուն.

– Շկո, որ թողնես գնա՝ գելը ուտի, ափսոս է, չէ՞, Շկո:

Քուրդը քորում էր գոմեշի ականջատակը, քուրդն ասաց.

– Բա կուտի, հիմար գել է, բա ինչ կանի: Տասնմեկ տարեկան է:

Քրդի աղջնակն աղբյուրից զույգ դույլով եկավ: Արծաթե զարդերը զնգզնգացնելով ծափ զարկեց ու մատներն իրար հագցրած կանգնեց գոմեշի դեմ.

– Ինչ լավ գումշուկ ունե՜մ: Ջագուկն ո՞ւր է:

Քրդի մայրը պղնձե ամանը լվաց, լուռ արտասվելով մտավ գոմեշի տակ և լացով ու երգով սկսեց կթել փափուկ-փափուկ՝ փըխ-փըխ, փըխ-փըխ. վիզը ծռելով գոմեշը հոտ քաշեց, նրանից ոչխարի հոտ էր գալիս, ետ դրեց ոտը և թույլ-թույլ բացեց կաթի երակները: Սարին քսվելով հովն անցնում-գնում էր, իսկ ոչխարի կծու հոտը ուրթին կպած էր մնում, արև էր ու շոգ չէր, ուրթի գլխին կապերը լուռ տնքալով քանդում էր խանձարուրի չափ մի սպիտակ ամպ, ամպի տակ իր եր-գի ճոճքում մի փոքրիկ արտույտ հրճվում էր՝ թե արև է, հով է, ամպ է, ես եմ, պառավը գոմեշին կթում է, ինչ ուրախ է:

Եվ հանկարծ կաթի երակները կարծրացան ու միանգամից փակվեցին:

– Վո՜ւյ էս ինչ էր,– փշաքաղվեց քրդի մայրը,– չարքը զարկեց:

Փափուկ նիրհի մեջ գոմեշը հանկարծ տեսավ, որ ընդարմությունից արթնանում ու շնչավորվում է ներքևի փոքրիկ հարթավայրը: Շրջապատը մթնում էր, իսկ ներքևի փոքրիկ հարթավայրը լուսավորվում ջերմ ու առկայծող: Ու մեկ էլ ներքևի շոգ հարթավայրում գոմեշների խմբից զատվեց, սևացավ ու վիթխարիացավ գոմշացուլը և, գլուխը բարձր, տաք ու խուլ մռլնգաց շատ ավելի ողնաշարով և ուսով, քան թոքերի ուժգնությամբ:

Գոմեշը կանգնեց սպասեց, աչքերը տամկացան, և հետո նրա կանչին պատասխանեց ուշ, շատ ուշ: Ապա խլացավ, կուրացավ, խելագարվեց ու մղվեց գլուխը բարձր, ինքը գետնից կտրված: Մի բան կտրուկ շուռ տվեց նրա վիզը և կոտրեց, գրեթե կոտրեց: Պարանն ու ցիցը: Նա սպասեց որ քուրդը կապն արձակի, բայց քուրդը կպել էր ցցին ու, փաթաթներ տալով, կարճացնում էր պարանը: Նա ետ-ետ արեց, պարանը պինդ էր, եղջյուրների արմատները ցավեցին, իսկ ցիցն ու քուրդը տեղահան ելան, քարշ եկան նրա կողքից: Նա գնաց ցատկելով, դնչի տակ թե կողքերին մի շուն էր դեսուդեն նետվում, պարանը կճղակի արանքն ընկավ, դուրս պրծավ ու ցիցը զարկեց փորին, իսկ շունը վնգստում էր հեռու մի տեղ, պարանը դարձյալ մտավ կճղակի արանքը, և նա գայթեց, ծնկեց ու ելավ տաքության մեջ խուլ: Նա կանգ առավ, նայեց տամուկ աչքերով ու մռլնգաց:

Պարանոցը թեք՝ գոմշացուլը կանգնած էր անշարժ ու մռլնգում էր ինքն իր ներսում:

Կանգ առնելով յուրաքանչյուր քայլից հետո, նա վերևից իջավ հանգիստ, նա նրան մոտեցավ քայլ առ քայլ: Նրանք կանգնեցին իրարից հեռու և նայեցին իրար: Եվ դրանից հետո նրանք ոչինչ չարեցին, այլ արեց նախիրների ու գոմեշների աստվածը: Նա նրանց արանքի հեռավորությունը հանեց, նրա վիզը դրեց նրա բկի տակ, խառնեց նրանց սաթե հոսանքները միմյանց, նրանց փաթաթեց խուլ գվվոցների, կարոտների, խլության, կուրության, անամոթության ու արյան ցնդող տաքության նույն թանձր թաղիքի մեջ: Եվ երբ նրանք նույնացան, նա ինքն այլևս չկար, նա գոմեշ չէր, այլ այրվող, բաց, շեկ արգանդ: Եվ երբ իր արյունը բռնկվեց ու հանգավ, նա անջատվեց նրանից, ինքը փակեց իրեն, դարձավ առանձին, սև, մայրացու, գոմեշ: Սարերի ձայները խշշոցով լցվեցին ականջները, մութը ետ գնաց, պարզ լույս եղավ, լեռների ու գոմեշների գծերը ճոճվեցին ու

կայունացան: Աշխարհը դարձավ աշխարհ:

Քուրդն ուզում էր նրան տիրանալ, չգիտես շունն ինչ էր ուզում՝ որ ցատկոտում էր դնչի տակ, ցիցը դիտումնավոր հարվածի պես չարությամբ էր խփվել փորին, իսկ քրդի պարանը խանգարում էր: Նա գնաց ջուր խմեց և, գլուխը բարձր, մշուշների ու օրերի միջով տեսավ նանին: Նա ուզեց ճանապարհ ընկնել, բայց պարանը մտավ կճղակի արանքն ու խանգարեց: Աչքի պոչով նա տեսավ գոմշացուլին, որ անհեթեթ ու անհասկանալի գոյություն էր: Պարանը դարձյալ խանգարեց, և նա կանգ առավ: Մեկը ետևից գալիս էր. դա գոմշացուլն էր և նրա գալն անիմաստ էր, որովհետև նա նրա սարերի բնակիչ չէր: Պարանը ջղայնացնում էր. նա հուսահատ կանգ առավ, և այդ ժամանակ մեկի գլուխը քսվեց նրա մեջքին: Նա կտրուկ շուռ եկավ ու պոզահարեց գոմշացուլին, և այդ գոմշացուլը հիմար կենդանի էր: Այդ գոմշացուլը կանգնել էր արահետին և վիզը հիմարի պես ծռել էր ու ետ էր նայում: Պարանն այս անգամ ցավեցրեց կճղակի արանքը և ճզմեց աչքը. նա կանգ առավ ականջ դնելու ցավերին – արգանդը խաղաղիկ սաղմ էր հյուսում նրա մեջ, ցավում էր կճղակի արանքը, աչքը մարմրում էր, ողի ցավը հին, բութ ու կայուն էր, մերթ ժայթքում ու մերթ հանդարտ ծխում էր ցցի խփածը, ականջի ծայրը քոր էր գալիս, երևի ճանճ էր նստել ականջի ծայրին: Հանդարտ իրար եկող ցավերի միջից նա խուլ ոտնաձայներ լսեց, նա ֆշշոցով շուռ եկավ, վիզը կեռեց ու սպասեց. այդ ժամանակ գոմշացուլը մոլորված կանգ առավ, նայեց դես, նայեց դեն, ապա հիմարի պես սկսեց արածել:

Երկրաբանները նրան շրջապատեցին, կացինը ձեռքներին՝ փակեցին նրա ճանապարհը, ծիծաղելով վրա թափվեցին, մեկը բարկացավ, նրան ծնկի բերին, ապա, երբ նա բոլորովին հաղթվել էր ու իրեն հանձնել նրանց՝ ետ քաշվեցին:

– Դե հիմա գնա:

Նա քայլեց զգույշ, լարված, գայթեց ու կանգ առավ, բայց աչքը չէր ճզմվել և կճղակի արանքը չէր սղոցվել: Նա մի պահ սպասեց ու քայլեց, իսկ պարանը չէր խանգարում: Նա կանգ առավ, գլուխը թափահարեց, եղջյուրներն ազատեց պարանի հուշից ու գնաց արագ, նպատակով, անկանգ: Աշխարհը կայուն էր նրա գնացքի տակ և առանց դողի էր տանում նրա անթրթիռ գոյությունը:

Հինգերորդ օրվա երեկոյան, աղջամուղջի հետ, երբ տավարը ծանր կրծերով կթի էր գալիս, նա հոգնա՜ծ-հոգնած մտավ ուրթ: Նա

ուրթ մտավ հերկից եկող եզան պես, հնձից դարձող մշակի, դարբնոց գնացող գութանի պես, կեսգիշերին տեղ հասնող ճանապարհի նման, որպես գյուղի ամռան երեկո: Ծանրումեծ սպասող կովերի միջով նա եկավ, կանգնեց թաղիքե հին վրանի դռանը, և ինքը վրանի չափ էր, ու հոգնած մռլնգաց. ը՜ըմ:

– Ձա՜ն,– ասաց նանը,– եկա՞ր: